ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱՐ 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Սասնա ծռեր» էպոսի գաղափարը. ուսուցման խնդիրները հանրակրթական դպրոցում

Հետազոտող ուսուցիչ՝ Մարիամ Սարգսյան

Ալ. Մյասնիկյանի անվան համար 66 հիմնական դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------- 3.

Գլուխ 1. ---------- 5.

Գլուխ 2 .----------12.

Եզրակացություն ----------13.

Օգտագործված գրականության ցանկ ---------- 14.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշակերտը ոչ թե սափոր է, որ պետք է լցնել
գիտելիքներով, այլ ջահ է , որ պետք է վառել...
Մարկոս Քվինթիլիանոս

Կրթությունը մարդու և արտաքին աշխարհի հարմարեցման լավագույն միջոցն է: 21-րդ դարի ուսուցիչը կանգնած է լուրջ մարտահրավերների առաջ: Աշխարհի գերզարգացման այս թռիչքի ժամանակներում ուսուցչի հետազոտական աշխատանքի նպատակը արդյունավետ մեթոդական մշակումներ անելն է: Ուսուցման գործընթացը հիմնված է ուսուցչի և սովորողների համատեղ գործունեության վրա, որի ընթացքում իրականացվում է կրթություն, դաստիարակություն, անձի զարգացում: Արդի մանկավարժական որոնումների նպատակն է ուսուցման գործընթացը դարձնել այնպիսին, որ սովորողների պասիվ ունկնդրի դերը փոփոխվի ակտիվ մասնակցի դերով: Արդյունքում սովորողները դառնում են առավել անկաշկանդ և ինքնուրույն, նրանց մոտ ձևավորվում են ճանաչողական հետաքրքրություններ ու կարողություններ:

Հայոց լեզվի և գրականության ուսուցչի նպատակն է սովորողի մեջ խթանել ինքնուրույն կարծիք ձևավորելու, հստակ դիրքորոշում ունենալու և հիմնավորելու, տեղեկատվական իրարամերժ ազդեցություններից զերծ մնալու կարողունակությունը: Արդյունքում սովորողները պետք է կարողանան բազմակողմանի դիտարկել ուսումնական նյութը, լուծումներ առաջարկել, այս կամ այն մտքի հետ համաձայնել կամ չհամաձայնել՝ հստակ հիմնավորելով իրենց տեսակետը:

Հետազոտության թեման է «Սասնա ծռեր» էպոսի դասավանդման մեթոդները 9-րդ դասարանում: Արդի չափորոշչային պահանջներով առավել շեշտադրված է էպոսի ազգային- հայրենասիրական գաղափարը: Մինչդեռ բազմադարյա մեր վիպերգը խիստ բազմաշերտ է՝ անհատից մինչև համամարդկային խնդիրներ: Պատահական չէ, որ մեր էպոսը 2012 թվականին ընդգրկվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում:

Էպոսի դասավանդման նպատակներն են.

Սովորողը պետք է իմանա՝

- ինչ է դյուցազներգությունը,
- դյուցազներգության՝ որպես գրական տեսակի առանձնահատկությունները,
- դյուցազներգության բովադակությունը, գաղափարը:

Վերջնարդյունքներն են.

Աշակերտը պետք է կարողանա՝

- բացատրել՝ ինչու է էպոսը համարվում ազգային վեպ,
- ներկայացնել ժողովրդական բանահյուսության ստեղծած հոգևոր հարստությունները, դյուցազներգության անցած ճանապարհը մինչև մեր օրերը, ասացողներին, էպոսի մշակողներին,
- բնութագրել հերոսներին և մեկնաբանել նրանց արարքները,
- կատարել հերոսների բնավորության և արարքների բազմակողմանի քննություն, զուգահեռներ տանել այսօրվա հետ,
- ձևավորել ազգային-հայրենասիրական սթափ գաղափարներ. պատմությունից դասեր քաղելու, ազգային թերություններն ու առավելությունները հստակ տեսնելու կարողություն,
- էպոսն ընկալել ոչ թե որպես երկդարյա իրադարձություններ արտացոլող պատում, այլ որպես հայկյան ցեղի հետ սկիզբ առած վիպերգ, որ այսօր էլ շարունակում է հյուսվել
- հստակ պատկերացնել պետության կարևորությունը, քաղաքական մտածելակերպ ձեռք բերել, ունենալ ոչ թե ենթարկվողի, այլ իշխողի տրամաբանություն ,
- արժևորել դյուցազներգության գաղափարները,
- գտնել ազգային ինքնաճանաչողության բանալիները,

Խաչվող հասկացություններ՝

- ժամանակ և տարածություն,
- սեփական պետության արժևորում։

ԳԼՈՒԽ 1.

«Սասնա ծռերի» դասավանդման ընթացքում կիրառվում են հետևյալ մեթոդները.

- համեմատական-զուգադրական մեթոդը՝ օգտվելով նաև տարբեր հեղինակների գրական մշակումներից,
- զրույցը, քանի որ ակնկալվում են թեմատիկ որոշ շեղումներ,
- բանավեճը՝ քննական մտածելակերպ և լուծումներ գտնելու կարողունակության զարգացման համար:

Սովորողները անդրադառնում են ժողովրդական բանահյուսության ճյուղերին, ապա դիտարկվում է էպոսը՝ որպես բանահյուսական նմուշ, էպոսի՝ որպես ազգային բնավորության, պատմության, հոգեբանության, ազգային արժեքները գնահատելու, պահպանելու, անցյալի դասերը վերլուծելու, գաղտնագրերի էությունը հասկանալու, հերոսականության գաղափարները:

Անդրադարձ է կատարվում էպոսի բովանդակությունը: «Սասնա ծռերը» ընդունված է դիտարկել որպես 8-10-րդ դարերի հերոսավեպ, երբ հայ ժողովուրդն ազատագրական պայքար էր մղում Արաբական խալիֆայության դեմ, բայց սա խիստ միակողմանի մոտեցում է: «Սասնա ծռերը» կրում է բարձրակարգ համաժամանակյա գաղափարներ: Դյուցազներգությունն առհասարակ հնարավոր չէ թվագրել, ինչպես թվագրվում է պատմությունը: Ժողովրդական մեր հերոսավեպը սկսել է հյուսվել հայ ժողովրդի ծագումից ի վեր, ունի շուրջ 2900 տարվա անցած ճանապարհ, բայց գրի է առնվել և գիտությանը հայտնի դարձել միայն 19-րդ դարի 2-րդ կեսից: 1873 թվականին բանահավաք Գարեգին Սրվանձտյանը Արևմտյան Հայաստանի Մուշ գավառի Առնիստ գյուղում Կրպո անունով մի բանասացից լսում և գրի է առնում հերոսավեպը, իսկ 1874 թվականին նա Կոստանդնուպոլսում առանձին գրքով տպագրում է՝ «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Միհրի դուռ» խորագրով[1]:

Մինչ Սրվանձտյանի հայտնագործությունը էպոսի մասին տեղեկություններ են հայտնել 16-րդ դարում պորտուգալացի ճանապարհորդներ Անտոնիո Տենրեյրոն և Մեստրե Աֆոնսոն, որոնք Արևելքում ճամփորդելիս եղել էին նաև Հայաստանում, իսկ Սասունում տեղացի հայերից լսել են զանազան զրույցներ Դավթի և Խանդութի մասին, բայց տեղեկությունները կցկտուր ու թռուցիկ էին: 1886 թվականին Մանուկ Աբեղյանը Նախո Քեռի անունով մի մոկացուց գրի է առնում էպոսի 2-րդ պատումը և տպագրում՝ «Դավիթ և Միհր» խորագրով: Որոնումները շարունակվում են տարբեր բանահավաքների կողմից և մի քանի տասնամյակի ընթացքում պսակվում մեծ հաջողությամբ: Հայաստանի տարբեր գավառներից գրի է առնվում էպոսի շուրջ 160 տարբերակ:

Դյուցազներգությունը բերանից բերան պատմում էին սովորական

[1] « Սասունցի Դավիթ » / Լույս հր. 1981/ Ս. Հարությունյան, Հ. Կոջոյան էջ 3

ժողովրդական մարդիկ, որոնց անվանում են **ասացող:** Բազմաթիվ ասացողների անուններ են մեզ հասել: Նրանք մարդկանց հավաքում էին իրենց օդաներում և բանավոր պատմում, փոխանցում դյուցազներգության իրենց տարբերակը: Ամենահայտնիներից են Նախո Քեռու և Խապոյենց Զադիկի օդաները/հավաքատեղիները/: Էպոսի որոշ հատվածներ պատմելիս ասացողները հաճախ նույնիսկ արտասվել են, ինչը վկայում է, թե որքան են նրանք արժևորել էպոսը՝ որպես հայ ժողովրդին խորհրդանշող ու բնութագրող ամբողջություն: Կան վկայություններ, որ նույնիսկ օրերով մարդիկ հավաքված լսել են էպոսի պատումները՝ առանց ելումուտի և քար լռությամբ:

Շուրջ 60 պատումների հիման վրա էպոսի համահավաք բնագիրը լույս տեսավ 1939 թվականին՝ «Սասունցի Դավիթ» վերնագրով՝ Մ. Աբեղյանի, Գ. Աբովի և Ա. Ղանալանյանի մշակմամբ/ խմբագիր՝ Հովսեփ Օրբելի/ :

Պատումները հասել են ամենատարբեր բարբառներով, հատկանշական է, որ թեև էպոսի հիմքում Սասունն է նշվում, բարց ամենաքիչը հենց Սասնա բարբառով պատումներն են: Պետք է ասել, որ տարբեր գավառների պատումների բովանդակությունը երբեմն կտրուկ տարբեր է եղել: Կան պատումներ, որոնցում բացակայել է Սանասարի և Բաղդասարի մասին ճյուղը, որոշ պատումներում չի հիշատակվում նաև Մեծ Միհրը, բայց Դավթի մասին շեշտադրված պատմվում է պատումների բոլոր տարբերակներում: «Սասնա ծռերը» տոհմածառ է՝ 4 սերնդով, հայերս այդ նույն տոհմածառի ճյուղերն ենք, որ ժառանգաբար կրում ենք Սասնա դյուցազուններին բնորոշ դրական և բացասական հատկանիշները: Սասնա տունը պատումներում կոչվել է Մեծ տուն, ինչը խորհրդանշել է հայոց պետականության մոդելը: Էպոսի 4 ճյուղերին անդրադառնում ենք առանձին-առանձին: Յուրաքանչյուր ճյուղն ուսումնասիրելուց հետո սովորողները գնահատում են գաղափարը, հետևություններ անում, գնահատում հերոսներին: Բացի էպոսի առանցքային հերոսներից հատուկ ուշադրության են արժանացնում նաև մնացած կերպարներին:

Ուսուցման նպատակներիս վերջնարդյունքն ապահովելու համար յուրաքանչյուր ճյուղի բովանդակությունն ուսումնասիրության ավարտին սովորողներին տրվում է համահավաքում չընդգրկված, բայց տարբեր բանահավաքների և ուսումնասիրողների կողմից հայտնաբերված տարբերակներ, վարկածներ և մեկնաբանություններ:

«Սանասար և Բաղդասար» ճյուղն անցնելիս բովանդակությունից բացի սովորողը պիտի կարողանա գնահատել Սանասարի առաքելությունը՝ պետություն հիմնելու: Պետք է նշել, որ էպոսի բազմաթիվ պատումներում Սանասարն ու Բաղդասարը ոչ թե ջրից են ծնվել, ինչպես համահավաք բնագրում է ասվում, այլ ծնվել են Բաղդադի Խալիֆի և Ծովինարի ամուսնությունից: Բաղդադի Խալիֆը հնագույն ժամանակներից հայտնի Սենեքերիմ թագավորն է/ Խորենացուց հայտնի/:

Ամուսնության շարժառիթը սերը չէր, այլ ուներ զուտ քաղաքական կայունություն ապահովելու նպատակ: Ծովինարը Հայաստանի Գագիկ թագավորի դուստրն էր, իսկ Հայաստանը հարկատու էր Մսրա երկրին, որը ոչ թե Արաբական խալիֆայությունն է, այլ հին Եգիպտոսը:

Սանասարը բնույթով առաջնորդ է / ինչպես Հայկ Նահապետը/, նա չի ընդունում հնազանդությունը: Երկու եղբայր դուրս են գալիս Խալիֆի երկրից , փնտրում ու հայտնաբերում են լեռնային մի երկիր, այնտեղ կառուցում են իրենց քաղաքն ու բերդը, բնակեցնում , հիմնադրում են « Սասնա Ջոջանց տունը»[2] : Սանասարն ու Բաղդասարը Սասնա դյուցազնական տոհմի նախնիներն են՝ պետության և տոհմի հիմնադիրը: Սասնա տունը խորհրդանշում է հայրենիքը: Բաղդասարից սերունդ չի շարունակվում: Սասնա դյուցազնական տոհմը շարունակվում է Սանասարի ժառանգներից՝ Մեծ Մհեր, Ձենով Հովան, Վերգո:

Անդրադառնում ենք «Մեծ Մհեր» ճյուղին: Երեք եղբայրներից հոր դյուցազնական հատկանիշները ժառանգում է Մհերը: Սասնա տան իշխանությունը նրան է անցնում: Մեծ Մհերը շենացնում է երկիրը, ազատում այն մեծ Մսրա Մելիքի հարկադրումից, պատերազմում է Սասունի անկախությանը սպառնացող Մսրա Մելիքի դեմ, Սասունը դարձնում անկախ ու հզոր: Մհերի քաջությունն ու դյուցազնական ուժը երևում է նաև առյուծին մեջտեղից կիսելու՝ ձևելու տեսարանից: Առյուծը խորհրդանշում է երկրի անվտանգությանն ու բարեկեցությանը սպառնացող թշնամիներին:

Հարկ է անդրադառնալ նաև էպոսում արտացոլվող հեթանոսական սովորույթներին: Մհերը, ըստ ազգագրագետ-բանահավաքների որոշ մասի, խորհրդանշել է արևի աստված Միհրին /Միթրային/, որը պատկերվում էր շեկ առյուծի գլխով: Դյուցազնի՝ Առյուծաձև Մհեր անվանումը նաև այս վարկածով է մեկնաբանվում: Հեթանոսական ավանդույթով է մեկնաբանվում նաև Մեծ Մհերի 7 տարով Սասունը լքելն ու Մսրրում հաստատվելը: Երբ Մսրա Մելիքը եկել է Սասուն՝ հարկ հավաքելու, Հովանն ու Վերգոն փորձել են Մհերին «սովորեցնել» որոշ դիվանագիտական հմտություններ՝ Մելիքին մեծարելու և բարյացակամությունը շահելու: Մհերն իրեն պահել է դյուցազունին հարիր՝ անտեսելով եղբայրների խորհուրդները: «Սասնո երկիրը մերն է, իմ զարմից Սանասարն ու Բաղդասարն են շինել »,- ասել է նա:[3] Մելիքն առաջարկել է կռվել: Ամբողջ մի օր նրանք մենամարտել են, նրանցից ոչ մեկը մյուսին չի հաղթել: Մհերն ապացուցել է առաջնորդ լինելու իր իրավունքը: Մելիքն ու Մհերը բարեկամանում են՝ որպես տարբեր երկրների հավասար ուժերով և իրավունքներով օժտված առաջնորդներ: Մելիքի հետ Մսրը քաղաքից եկած տասը ծերունիների առաջ, ըստ հեթանոսական սովորույթի, Մսրա Մելիքն ու Մեծ Մհերը եղբայրության ծիսական երդումով արարողակարգ են

[2] «Սասունցի Դավիթ», Ս. Հարությունյան, Հ. Կոջոյան, «Լույս» հր., 1981, էջ 6:

կատարում: Նրանք իրար երդվում են, որ իրենցից որևէ մեկի վաղաժամ կյանքից հեռանալու դեպքում մյուսը պարտավորվում է մեռած եղբոր կնոջ ամուսինը դառնալ, վերցնել թագավորությունը, որպեսզի մեռնողի երկիրը չկործանվի և անժառանգ չմնա: Հաջորդ տարի Մեծ Մսրա Մելիքը մահանում է: Միհրը, համաձայն իրենց երդումին, պարտավորվում է թողնել Սասնա իշխանությունը եղբայրներին և գնալ Մսր: Եթե Միհրը հետ կանգներ վկաների առաջ տրված իր խոստումից, ապա Մսրից կգային ուխտին մասնակից տասը վկա ծերունիները Սասուն և քաղաքային հրապարակում կպատմեին Միհրի երդմնազանցության մասին: Այնինչ Միհրը Սասունին դեռ ժառանգ չէր պարգևել: Միհրի կինը՝ Արմաղանը, ամուսնուն հետ պահելու անպտուղ փորձերից հետո զգուշացնում է նրան, որ Սասնա տան ժառանգներին արգելված է երկու բան՝ սուտ երդվելը և այլազգի կանանց հետ խառնվելը, այլապես Սասունի անկախությունն ու կայունությունը կվտանգվի[3]: Արմաղանը խորհրդանշում է Սասնա Մեծ տան կանանց իմաստնությունը: Մեծ Միհրը Մսրում մնում է 7 տարի, նրանից և Մելիքի կնոջից՝ Իսմիլ խաթունից ծնվում է կրտսեր Մսրա Մելիքը: Յոթ տարի հետո Միհրը վերադառնում է հայրենի Սասուն: Վիրավորված Արմաղանին Մեծ տան իշխանները պարտավորեցնում են ընդունել ամուսնուն, քանի որ Սասնա երկրին դյուցազնական ժառանգ էր պետք:

Անդրադառնում ենք «Սասունցի Դավիթ» ճյուղին: Շուտով Մեծ Միհրից և Արմաղանից ծնվում է էպոսի գլխավոր դյուցազունը՝ Սասունցի Դավիթը: Դավթի ծնվելուց կարճ ժամանակ անց Միհրն ու իր կինը մահանում են: Սասնա աշխարհում սուգ է բռնվում: Ծանր սգից հետո իշխանական տան առաջնորդները՝ Ձենով Հովանը, Վերգոն, Քեռի Թորոսը, ավագների խորհուրդը հավաքվել ու քննարկել են Դավթի խնամակալության հարցը: Հորեղբայրներից որևէ մեկը չի ցանկանում ստանձնել փոքրիկ դյուցազնի խնամակալությունը: Երկար քննարկումներից հետո որոշում են նորածնին ուղարկել Իսմիլ խաթունի մոտ՝ համաձայն Մեծ Միհրի և Մսրա Մելիքի միջև կնքված ուխտի: Սասունի կառավարումը մնում է Սանասարի մնացած ժառանգների ուսերին, որոնք օժտված չէին դյուցազնական հատկանիշներով և ապիկար էին երկիրն ամուր պահելու հարցում: Տեղին է այստեղ հիշատակել Եղ. Չարենցի նզովքը Սասնա իշխաններին.

Դառնանք բարբառենք նզովք մենք նախ
Մսրամելիքին, թագավորին,
Դառնանք բարբառենք նզովք ապա
Ձենով Օհանին, իշխանին նենգ
Դառնանք բարբառենք նզովք ապա
Այլ իշխաններին բոլոր այն մեր,
Որ բերին մեզ մահ, ու մուժ, ու նեռ[4]:

---

[3] Լ. Խեչոյան, Միհրի դռան գիրքը, «Անտարես», 2014, էջ 66:
[4] Եղիշե Չարենց, Երկեր, «Սովետական գրող», 1983, էջ 443:

Դավիթը Մսըրում ապրել է 9 տարի, բայց ազնվականների զավակներին ծեծելու, ավագ եղբոր՝ Մսրա Մելիքի ատելության պատճառով Իսմիլ խաթունն այլևս չէր կարողացել նրա անվտանգությունը պահպանել: Դավթի վերադարձին ողջ Սասնա ժողովուրդը շքախումբ կազմած ընդառաջ է գնացել, միմյամց աչքալուսանք տվել Մեծ տան իշխանական ժառանգի վերադարձի կապակցությամբ՝ ակնկալելով, որ Դավթին Մհերի տեսքով ու պայծառակերպությամբ կտեսնեն: Տեսնելով դաշտով եկող, աջ ու ձախ խոտ պոկոտող տղային՝ սկզբում կասկածել են, թե եկողը Դավիթն է: Հիասթափությունից սկզբում պապանձված Ձենով Հովանը՝ իրենց հիասթափությունը ժողովրդից քողարկելով, բարձր կանչել է Քեռի Թորոսին, թե՝ «Ճամփից դուրս ծուռ-ծուռ եկող էն տղան, վայ թե ծուռ Դավիթը լինի, մեր ցեղի քայլվածքով է գալիս»[5]: Դավիթին դարձնում են նախրապան ՝ իշխանական գործերի համար չափազանց միամիտ ու նույնիսկ պակասամիտ համարելով: Դավիթը նախիրի հետ քաղաք է բերում նաև վայրի գազաններին: Դավթի այս քայլը խորհրդանշական է . նա կարողանում էր համակեցություն ու հավասարություն ապահովել թույլերի և ուժեղների, իշխանների և ժողովրդի միջև՝ երկու կողմին էլ ենթարկեցնելով իրեն՝ որպես ի վերուստ նախնիներից դյուցազնական հատկանիշներ ժառանգած առաջնորդի: Դավթի հայրենիք վերադառնալուց հետո Դավիթ-Մսրա Մելիք անձնական հակադրությունն ու թշնամանքը վերածվում է ազգային- հասարակականի: Սասունը հպատակեցնելու փորձեր են սկսվում Մսրա Մելիքի կողմից: Փաստացի երկու արյունակից եղբայրները՝ Դավիթը և Մելիքը, սկսում են պայքարել առաջնորդի իրենց իրավունքը հաստատելու համար: Մելիքը խորհրդանշում է նենգությունն ու չար նախանձը, իսկ Դավիթը՝ անպարտելի քաջությունն ու վտանգավոր միամտությունը: Դավթի այս հատկանիշները մեր ազգային ինքնաճանաչողության գլխավոր բանալիներն են: Պատահական չէ, որ ասացողները Դավթի՝ Մսրա Մելիքից խաբվելու և խոր փոսն ընկնելու հատվածը դառն արտասուքով ու կսկիծով են պատմել բանահավաքներին՝ հստակ իմանալով , որ Դավիթը կարողանում է դուրս գալ փոսից և հաղթել Մելիքին:

Օ՜, մանուկ Դավիթ դու միամիտ,
Առյուծ Մհերի որդի ռամիկ,
Քո գլխում ինչքա՜ն խաղա քամի,

Ահեղ փորձության, մահու ժամին,
Որքա՜ն հավատաս անգետ կամիվ
Ամեն մի ոսոխ ու թշնամի
Մսրամելիքի ու Օհանի...

[5] Լևոն Խեչոյան, Մհերի դռան գիրքը, «Անտարես», 2004 , էջ 75:

Եվ մանուկ Դավիթն, արդար ու մեղմ,
Հավատաց չարին ու մտավ ներս,
Եվ ընկավ՝ խաբված դավով այն նենգ,
Մելիքի փորած անդունդի մեջ …[6]

Հատուկ անդրադառնում ենք նաև Դավթի և Չմշկիկ Սուլթանի անօրինական կապին, նրանցից ծնված Հրանուշ անունով աղջկան, որը հետագայում սպանում է հորը: Սասնա հզոր դյուցազունը, որ անպարտելի էր բոլոր թշնամիների համար, կործանվում է իր իսկ սերմի ապօրինի զեղումից: Այստեղ հատկանշական է շեշտել, որ էպոսի այսպիսի զարգացումը պատահական չէ: Որպես հավաքական ամբողջություն, հայ ժողովուրդն իմաստուն է. էպոսի իր ամենասիրված ու քաջ դյուցազնի կործանումն այդպես հյուսելով՝ ժողովուրդը հստակ գիտակցել է և շեշտադրել, որ մեր կորուստը մեզնից է, ինչպես Դավիթն է ասում՝ «Իմ ցեցն ինձնից է»: Անդրադառնում ենք վերջին ճյուղին «Փոքր Միհր» ճյուղի բովանդակությունն ամփոփելուց հետո սովորողներն առանձնակի բազմակողմանիությամբ դիտարկում են Միհրի կերպարը, համամարդկային գաղափարները, անմահ, բայց անժառանգ լինելու պատճառները, Միհրի ստանձնած առաքելությունը: Սասնա հզոր դյուցազուն Դավթից ծնվում է Փոքր Միհրը: Նորածին դյուցազնի փակ բռունցքը բացվում է միայն Քեռի Թորոսի երկար ջանքերից ու աղոթքներից հետո: Բռունցքի մեջ պինդ պահած մի պուտ արյունը տեսնելով՝ Քեռի Թորոսը մարգարեաբար ասում է , որ թե քարն այս տղային ներս առավ՝ ներս առավ, այլապես հողն ի զորու չի լինի Միհրին իր վրա պահել: Մի կաթիլ արյան տեսքով փոքրիկ դյուցազնը աշխարհն է բռունցքի մեջ պահում: Միհրը քաջ է ու անվախ, ինչպես իր նախնիները: Բայց նա իր ժողովրդի կողմից ամենաչհասկացված կերպարն է: Դավիթն ըստ էության ոչ թե անիծում է որդուն՝ անմահ ու անժառանգ լինել, այլ գերբնական հայրական զգացումով մարգարեանում է: Մարդկությունից ու աշխարհի անարդարությունից դժգոհ Միհրը հրաժարվում է Սասնա իշխանական Մեծ տան գահից և կամովին փակվում է Ագռավաքարում: Ագռավաքարը խորհրդանշում է բնության արգանդը, որտեղ իր ծնունդին է սպասում նոր աշխարհի խորհրդանշական կրողը՝ Փոքր Միհրը:

«Սասնա ծռերի» ուսուցման ընթացքում սովորողները քննարկում և գնահատական են տալիս նաև ոչ առանցքային կերպարներին՝ ժողովրդի իմաստությունը խորհրդանշող Քեռի Թորոսին, Արտատեր Պառավին, Մեծ տան կանանց: Առանձնակի դիտարկվում է նաև ջրի պաշտամունքը: Ջրից է զորեղանում ու գերբնական ուժ ստանում Սանասարը: Ջրից է Սանասարը դուրս հանում ու իր ժառանգներին սերնդեսերունդ փոխանցում Քուռկիկ Ջալալին և Թուր Կեծակին: Մեծ Միհրը կռվից առաջ լողանում է Կաթնաղբյուրում, խմում այդ ջրից և զորեղանում: Որոշակի անդրադարձ է կատարվում նաև կրոնական գաղափարներին: Էպոսում չկա

[6] Եղիշե Չարենց, Երկեր,/ Սովետական գրող 1983/ էջ 460:

կրոնական շեշտադրում, բայց առկա են հեթանոսական և քրիստոնեական ծիսական նկարագրություններ: Էպոսի հերոսները պաշդպանում են իրենց հավատը, բայց նրանք անտարբեր են կրոնի հանդեպ: Եվ հենց այդ իմաստով էլ նրանց համար կրոնն ու հավատը հավասարազոր չեն:

ԳԼՈՒԽ 2.

Դյուցազներգությունը, որպես ժողովրդի կողմից հյուսված վիպերգ, համակողմանի ուսումնասիրելու դեպքում տալիս է մեզ ազգային ինքնաճանաչողության բանալիները: Էպոսի դյուցազուններից յուրաքանչյուրին բնորոշ առանձնահատկությունները բնութագրում է հայ ժողովրդին:

Սանասարն ու Բաղդասարը ահռելի ջանքերով կառուցում են իրենց բնօրրանը, բայց անուն ընտրելու համար մի ծերունու են դիմում և այդ ծերունու «Սա սյուն է» արտահայտությամբ են անվանում Սասունի անունը, ինչը բնորոշում է մեր դյուցազունների հասարակ ու մեծամտությունից զուրկ լինելը, մեծերի իմաստնությանն ապավինելը:

Մեծ Մհերը քաղաքական գործչին և առաջնորդին բնորոշող դյուցազուն է: Նա իր պարտքն է համարում ժողովրդի խաղաղ ու բարեկեցիկ կյանքն ապահովելը: Իր նախնիներից ժառանգած երկիրը պաշտպանելն իր պատվի և արժանապատվության հարցն է համարում: Մեծ Մհերին բնորոշող առանձնահատկություն է նաև իր խոսքը պահելը, որպես տղամարդ տված խոստումին հավատարիմ մնալը:

Սասունցի Դավիթն իր «ծռությամբ» և աններելի միամտությամբ երբեմն թերահավատություն է ներշնչում իր նկատմամբ, բայց նա օժտված է ասպետական քաջությամբ: Էպոսի ամենասիրված ու առանցքային կերպարն է, քանի որ Դավիթը տիպիկ մարմնավորումն է հայ ժողովրդին բնորոշ բոլոր հատկանիշների: Որպես առաջնորդ նա վտանգավորության աստիճան միամիտ է, դիվանագիտությունից զուրկ, ոչ խորատես: Փոխարենը նա անասելի անվախ է, քաջ ու հզոր, օժտված է վեհանձնական բարությամբ, հայրենի սահմանները պահպանելու մեծ պատասխանատվությամբ:

Փոքր Մհերը էպոսի ամենախորհրդանշական կերպարն է: Նա փակվել է Ագռավաքարում, որ ըստ հին քուրմերի բնության արգանդն է խորհրդանշում, որտեղից Մհերը դուրս է գալու հին ու անարդար աշխարհի փլուզման և նոր, չարատավորված աշխարհի վերստեղծման հետ: Փոքր Մհերը համամարդկային արժեքների կրողն է:

Մսրա Մելիքի կերպարը մարմնավորում է հայ ժողովրդի թշնամիներին: Պատահական չէ, որ հայ ժողովուրդն իր էպոսը հյուսելիս իր թշնամուն ստեղծել է իր իսկ արյունից: Սա էպոսի գաղտնագրված բանալիներից է, որ մեզ տանում է դեպի ինքնաճանաչողություն, առ այն, որ մե՛նք ինքներս ենք մեր թշնամին, որ մեզ միայն մենք կարող ենք կործանել : Ինչպես Դավիթն է ասում՝ «Իմ ցեցն ինձնից է»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով ազգային էպոսի ուսուցման առանձնահատկությունները՝ հանգեցինք այն եզրակացության, որ «Սանա ծռեր» էպոսը դեռ տևական ուսումնասիրության կարիք ունի: Դրանում արծարծված գաղափարները վերժամանակյա են՝ արժանի համակողմանի քննության: Հաշվի առնելով միջին դպրոցի սովորողների կարողությունները՝ էպոսի ծավալն իր ողջ բազմաշերտությամբ չենք կարող ուսուցանել, բայց պարտավոր ենք ամբողջական գաղափար տալ վեպում թաքնված գաղտնագրերի, ինքնաճանաչողության, հայրենասիրության, մարդկային և ազգային արժեքների մասին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Լիլիթ Հովսեփյան, Էպոսի տասը ընտիր պատումները
2. Լևոն Խեչոյան, Միհրի դռան գիրքը
3. Եղիշե Չարենց, Սասունցի Դավիթը
4. Մանուկ Աբեղյան, Սասունցի Դավիթ
5. Ալիտա Դոլուխանյան, Հայ գրականության դասավանդման մեթոդիկա
6. Հ. Կոջոյան, Ս. Հարությունյան, Սասունցի Դավիթ